

ԲԱԺԱՆՈ՞՞Յ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 Ժր.
Վեցամսեայ	6 »
Արսասահմանի համար Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ար.
Վեցամսեայ	1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Ծանուցման տողը ստացին երեսին համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեսին սակի սկզբունքները համար 20 Օլց գնդը կրչայ:

Պուշկարիոյ համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ) Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Նամակ եւ դրամ դրկեյ
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կրոնթիւմիս ևս լին սրուեր
Արսասահմանի համար ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)

ԱՐԵՒԵԼՔԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Վերջին ժամանակներս Արեւելքի մէջ տեղի ունեցած դանազան միջադէպեր կրկին իրենց վրայ հրախրեցին Եւրոպայի ուշադրութիւնը, որ Հարաւային Աֆրիկէի եւ Մայրագոյն Արեւելքի դէպքերով լարուած էր: Եօրկիսու իշխանին ճամբորդութիւնը յիշեցուց բոլոր սէրութեանց թէ՛ կրէտէ երբէք որոշու վերջնական վիճակ մը և 1895ին դժուած սահմանադրութիւնը բնաւ հաստատուն հանգամանք մը չունին, և թէ կղզեցիները անդադար կերպով իրականացումը իրենց հելլենական միութեան բազմաքննութիւն:

Անկարելի է չի խոստովանել որ կրէտական խնդիրը չէ լուծուած, թէ պարզապէս զինադուր մըն էր կատարուածը, թէ խնդիրը վաղ կամ անագան նորէն պիտի երեւան գար և թէ կառավարիչ-իշխանը, չափազանցօրէն ծանր պատասխանատուութեան մը տակ ընկճուած, և պետութեան մը կա-

ռավարութեան անհրաժէշտ գործարաններէն զուրկ, իր հպատակներուն չափ կը ցանկայ խնդրին վճռական լուծման մը հանգիւր տեսնելու:

Մամու կղզւոյն մէջ տեղի ունեցած ծանրանկարգութիւնները յայտնապէս կը վկայեն այն չարաշուք ազդեցութեան գործադրութիւնը, որ օսմանեան կառավարութեան աւանդական կազմակերպութիւնը յիշաշրջեց, Բ. Դուռը ստորագրած իրեն և երկրորդի պալատը իշխանութեան միակ կեդրոնը դարձուց:

Հասարակութիւնը շատ անգամներ առիթ ունեցաւ այս խորհրդաւոր փակարանին մէջ պատահած անկեկանքներով զբաղելու: Մահմուտ փաշայէն ետքը, Ապտիւլ Համիտը շրջապատող ուրիշ աւագանիներ աքսորանքի մէջ փնտռեցին իրենց ապահովութիւնը կամ ազատութիւնը:

Փախստականներու քով որոնք պատուաւոր հաստիքներ տուին թուրք ժողովրդին կամ հպատակ ազդեցութիւններուն ազատութեան դատին, Արեւմուտքի մայրաքաղաքներուն մէջ կը սկսին վիտալ Սուլթաններուն հին խորհրդա-

կանները, մտերիները, սիրելիները կամ գործիքները, որոնցմէ ոմանք մամուլին մէջ ահագին ազդեց կը բարձրացնեն իրենց յիշուած հանգէպ:

Որքան ալ միամտութիւն և նոյնիսկ վտանգաւոր ըլլայ բառաբան հաւատ ընծայել այս նորօրինակ դատաւորներուն սպաննալիքներուն կամ ամբաստանութեանց, ինչպէս Օմման փաշան որուն դէմ բունիսկ իր եղբայրը Ապտիւրրահման պէյ, հարկ կը տեսնայ զգուշացնել Հայաստանի բարեկամները, դարձեալ պէտք է իբրեւ ծանր ախտանիշ մը նկատել այս, «անխորհուրդ քայլերուն» բազմապատկուիլը:

Ասկէ զատ, ուրիշ աւելի անհանգստացուցիչ ազդարարութիւններ կուգան տարբեր կողմերէ: Եւրոպա որ իր ուշադրութիւնը բաժնել չի գիտեր, և որ Պօէրնբուրգ արշաւանքներուն կամ Պօքսէրնբուրգ սխրագործութեանց մէջ միայն իրեն շահ մը կը տեսնէ, անտարբերութեամբ լսեց անցեալ աշնան Անատոլի մէջ հայկական կոտորածներու վերսկսիլը:

Վստահելի վկայութեանց ման-

րաման պատմութիւնները քաղաքակիրթ աշխարհին ծանօթացուցին, Տիարպէքի իր կուսակալութեան երկու գիւղերուն մէջ, վերսկսուած այն վայրագութեանց որոնք երբեք քրիստոնեայ աշխարհը սարսուցեցուցին:

Այս վայրկեանիս երկու հայ առաջնորդներ, գերագոյն վտանգին պահուն իրենց հօտը մատնած չըլլալուն և իբրեւ ազգին հովիւները իրենց պարտականութիւնը կատարելուն պատճառաւ, իբրեւ յանցաւոր բանտնետուած են ստորագրաւ պաշտօնեայի մը մատնութեանց վրայ: Պատրիարքարանը իրար անցաւ, բուն բողոքներ ըրաւ, որոնց վրայ բանտարկեալներէն մին արձակուած էր, միւսը զապթիէներու և ոստիկաններու ընկերակցութեամբ չէպի ծովեզերք ճամբայ հանուած ուրկէ Պօլիս պիտի բերուէր:

Երբէք պաշտօնեաներու բժախնդիր հալածանքները, կառավարական հարստահարութիւնները, բոլոր այս առօրեայ բռնութիւնները, շարգերու սարսափին յանկարծական պայթիւթեմէն ալ վատթարագոյն, աւե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԻ ԿԱՂԱՆԴԸ

Համիտի արեւնոտ աթոռանիստի բնակիչները պատրաստուած էին դիմաւորելու 1897ի կազմողի գիշերը:

Միայն հայն էր անտարբերութեամբ սպասում այդ գիշերին եւ եկող նոր տարուն:

Նրա զգացմունքները ըթացել էին. նա չէր մտապել որ դեռ մի քանի ամիս առաջ իր կոխած փողոցներին ամէն մի քարը թրջվել ու ներկվել էր իր ամենալաւ գաւակներէ արիւնով...

Սարսափով էր մտաբերում անցնող տարին, երբ իր աչքերի առջեւ հայերը սրախողող եղան, երբ իր բոլոր յոյսերը օդը ցնցեցին: Մտաբերելով անցեալ սարսափելի տարին՝ մի լաւ բան չէր տեսնում եւ եկող

նոր տարվայ մէջ, ոչինչ չէր սպասում եւ նրանից...

Նոյնիսկ լաւատես, հայի ապագային հաւատացող փոքրամթիւ հայ տարրը իր սրտի վրա մի ծանր, շատ ծանր քար էր զգում. մի քար, որ կարմիր Սուլթանը դրել է հայ սրտի վրա, նրա բարսխումը ինքզինքը, վերջացնելու համար...

Դեկտեմբեր 31ի երեկոյն այր մարդիկ սկսեցին տուն վերադառնալ. ամէն մէկը մի մի կապոց միբզ եւ զանազան նւէրներ վերցնելով իր երեսաների եւ սիրելիներին համար: Բայց դրանք հայեր չէին, այլ յոյներ: Հայ հայերը սարսափում էին կապոցից. մանաւանդ մութ ժամանակ, Թուրք ոստիկանութիւնը, զինամիտից սարսափահար եղած, ամեն մի հայի տարած կապոցի մէջ մի քանի քիլօ զինամիտ էր երեւակայում... Եւ միմիայն այդ սին երեւակայում-

թիւնը բաւական էր կապոց տանող հային առանց հարցաքննութեան բանտի մէջ փթեցնելու:

Շատ Պոլսեցի հայ երեսաներ, մանաւանդ միջին եւ չքաւոր ընտանիքներին երեսաներ, որոնց ծնողները նախապէս չէին կարող կազմողի պատրաստութիւն տեսնել, առանց մրգի եւ նւէրների քննցին, մանկական սրտերը կտրած: Դրանցից շատերը սկզբում լացին, ազմկեցին, բայց երբ նրանց հասկացրին թէ՛ հեռու, ձիւնապատ Հայաստանի մէջ տանեակ հաղարներով փոքրիկ երեսաններ նոյն գիշերը, ոչ միայն միբզ չուներ, այլ և առանց մի կտոր հացի, թալանված մերկ խրճիթների մէջ տանջվում են, լուցին...

Բայց ամեն հօր, ամեն ծնողի սիրտ մէկ չի լինում. ծնողներ կան որոնք իրենց սիրելի փոքրիկին բաւականութիւն պատճառելու, նրա ժողովար, թովալը տեսնելու համար՝ ամէն զոհողութեան պատրաստ են:

Ոչգլխի հայրերից էր եւ Գուստիորուցի Մկրտիչ աղան, նրա հա-

մար իր մէկուճար չորս տարեկան Օննիկը, մի փոփոռիկ երեխայ, տէր ու թագաւոր էր: Սյդ փոքրիկ բռնակալի քէֆը չը կտորելու, նրա նշածե սեուկ աչքի մէջ արտասուքի կաթիլներ չը տեսնելու համար՝ Մկրտիչ աղան պատրաստ էր իր կեանքը տալ:

Դեկտեմբերի 31ի ամբողջ օրը նա իր մեծ շուկայի արհեստանոցում, ոսկի հալած կամ քերած միջոցին, միշտ մտածում էր թէ ի՞նչ միբզ եւ ի՞նչ նւէրներ գնի իր Օննիկի համար, որ այդ գիշեր մի լաւ ուրախացնի... Եւ մինչեւ այդ բոլորը չը գնեց, չը կարողացաւ հանգիստ աշխատել:

Վերջապէս մութն ընկաւ. Մկրտիչ աղան իր խալիֆային եւ աշակերտին դրամ ու նւէրներ տալուց յետոյ, սկսեց ոսկեղէն եւ արծաթեղէն իրերը շտապով երկաթէ արկղի մէջ տեղաւորել: Նա համբերութիւն չունեցաւ սպասելու որ աշակերտը խանութը մաքրի. նրանց ճամբու գրեց, ինքն էլ խանութի մի անկուռում դրված

լի անգթօրէն չեն ծանրացած այս տարաբաղդ գաւառներուն վրայ: Մասնաւոր նամակներ, որոնցմէ հայկական դատին նոր օսկանը «Բրօ Արմէնիան», իր ծրագրին համեմատ — որ ամեն բանէ առաջ տեղեկութիւն տալ է — իր վերջին թուին մէջ լայն քաղաածքներ բրած էր, ոչբարի կացութիւն մը կը նկարագրեն:

Այս գայթակղութեանց հանդէպ որոնք կը յաւերժանան, Եւրոպան տեղէն իսկ չի շարժիր: Անիկա թողուց որ այդ 1896ի կոտորածները թելագորող համաձայնութիւնը վիճումի մը հանգի: Քաղաքակիրթ աշխարհի այս հանդիսաւոր զինամբարձութիւնը յանուն շահի և քաղաքակիրթութեան, ոչորմն չի կերպով երեւան հանեց այս մեծ նիդակացութեան բացարձակ անկարողութիւնը:

Պետութիւնները իրենց տկարութիւնը հրապարակաւ խաղալիք ըլլալու չափ առաջ տարին: Անոնք հատուցում պահանջած էին շարժերէն քիստուող իրենց հպատակներուն համար: Բարեսիրտ անձնք պատարակեցին Հայոց արիւնը վճարել տալու այս ձեւը, մինչդեռ հազարաւոր ոճիրներ անպատիժ կը մնային: Ամէն պարագայի մէջ, անգամ մը Դուռը այդ պարտքը ստանձնած ըլլալով՝ անհրաժեշտ էր գործադրութիւնը պահանջել իրմէ:

Արդ, ճիշդ աս է որ դեսպանները կատարելու անփոյթ գլուխուեցան: Օսմանեան դանձը, իր պարբերական խեղճութեան ճշմարտակերպ պատրուակին տակ, կուտ մը անգամ չի վճարեց: Հարկ եղաւ որ, մէկ քանի պետութիւններ կասկածելի հնարքներու, մութ կարգադրութիւններու զիմեն, պահանջատէրերու մէկ մասը գոհացնելու համար:

Նայնիսկ Բ. Դուռը անխղճու-

թիւնը իր պահանջատէրերուն վրայ ճնշում դնելու աստիճան առաջ տարաւ, որոնց հանդէպ պարտքէ ազատելու դիտաւորութիւն երբէք չունէր: Անգլիոյ դեսպանը այս կատակէն չախորձեցաւ. գժգոհ պատասխան մը տուաւ և որոշեալ պայմանաժամ մը մէջ գոհացում պահանջեց: Սակայն արտակուսելի է որ ստանայ: Այս միջոցաւ, որուն վրայ բարգոյնեցաւ Ռուսիոյ պահանջած պատերազմական տուգանքը, յայտնուեցաւ կապացուցանէ թէ, Եւրոպա, քանի որ չի համարակիր հայկական ինդրին բացէ ի բաց մօտենալ, կըրնար ունէ ծուռ ճամբով մը իր անպարտութեան խայտառակութիւնը դարձանել և ձեռք առնել ինդրի մը ուրկէ չի պիտի կրնայ յաւէտ օճիքը ազատել:

Եան մէջ վիշեցին իրենց վերջին շունչը:

Այնտեղ, աշխարհի միւս ծայրում, հայ ժողովուրդն է խեղդվում իր մի երկու տարի առաջ թափված արեան մահացող դուրընց...

Բաւրաններ զրա Մակեդոնացիներն են անու գողով սպասում Սուլթան Համիտի օրած մանգաղին...

Մի խօսքով, աշխարհի որ կողմը աչք դարձնես, արիւն է երեւում ամեն տեղ. ականջդ որ կողմը ուղղես՝ հեծեծանք, արիւն է լսվում:

Արիւնի մէջ է ամբողջ մարդկութիւնը, վայրենի թէ քաղաքակիրթ: Հեծում է ամբողջ աշխարհը հակապահ հառաչանք արձակելով: Աւայդ հանրամարդկային տիեզերական հառաչանքը ուժգին թափով անցնում է նոր տարուն, 1901ին...

40070

ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ.

ՄԵՆՏ ԳԱՂԱՔԱՎԷՏՆԵՐ

Երկաթուղւոյ կայարանը հասած էինք: Առակիցս կղզար որ հիացած տպաւորութեան տակ չեմ մեկնիր, ուստի ուղեց իրենց ամենախելօք բաներէն բան մը իմացնել, ու խորհրդաւոր կերպով զէմքիս նայելով հարցուց:

— Ձեր կողմերը ի՞նչ կարծիք ունին հայկական խաղաղ ինքնավարութիւնը ընդ միշտ ուսակապետութիւն դարձնելու մասին:

— Չանաղան:

— Բայց ո՞ր կարծիքն է աւելի տարածուած: Նիմա այստեղ գրիթէ ընդհանուր կարծիք է սր պէտք է այդ շարժումը 25—30 տարի յետաձգել, մինչեւ որ քաղաքական պայմանները նպաստաւոր ըլլան: Ձեր կողմերն ալ այս կարծիքը ունեցողներ կան:

— Կան:

— Կեցցե՛ս, ուրեմն միայն մենք չենք. եղբայր բաւական չէր այդ մտքով կարգ մը թերթեր հրատարակելը, թախում մը միամիտներ ալ ելեր էին խիստ կերպով կուռել սովորելու:

— Այստեղ միթէ ազատ է զինավարժութիւնը:

— Դժբաղդաբար տղատ է. բայց մենք խելահաս գաղութացանք եւ համոզեցինք որ ես կենան:

— Ինչո՞ւ արգիլեցիք:

— Ինչու արգիլեցինք մի՞. հապա

1900-1901

Այս տարին էլ անցաւ, գնաց մեզ յիշատակ թողով մարդկային վշտի և տառապանքների մի ահագին, խոշոր արձանագրութիւն, որի մանրամասնութիւնները կարգացող, քննող մարդկային ապագայ սերունդը պէտք է ստուկայ...

1900ի մէջ էլ գազան մարդկութիւնը չը կարողացաւ իր արեան ծարաւին յագուրդ տալ, թէեւ ահագին քանակութեամբ արիւն հոսեցրեց:

Այսօր Զինաստանի և թրանսվալի մէջ արեան գետեր են հոսում. տասնեակ հազարներով մայրեր, քոյրեր, ամուսիններ, ու զաւակներ արտասովում են իրենց սիրելիների յիշատակի վրա, որոնք Աֆրիկայից մինչեւ Զինաստան, Զինաստանից մինչեւ Ֆիլիպպինները վաղուց յորդար-

նոր տարի է հայ ժողովուրդ, քո տառապանքները իր զէնքի թիւն են հասել. բայց գոնէ միթիթարվիր նրանով որ մենակ դու չես տառապողը: Քեզ պէս շատերը կան. արիւնլայ, մերկ և անօթի... բայց միշտ յուսով, միշտ եռանդուն, միշտ աշխատող տառապանքը ուրախութեան փոխելու...

Աշխարհը, նրա վայելքները հիմա ուրիշի արիւնը թափել, վաղեցնել գիտացողին են պատկանում: Աշխատիր սովորել ճշողիդ արիւնը թափել, մարմնը ըզիկ ըզիկ անել. այդ է միայն քո փրկութեան միջոցը: Մարդը նայիր, տես ո՞ր ժողովուրդն է աւելի երջանիկ. նա որ աւելի մեծ պատրաստութիւն ունի ուրիշի արիւնը թափելու:

Ճիշդ է, ուրիշի արիւնը թափելը գազանութիւն է, մարդասիրական սկզբունքներին դէմ է,

երկու կապողը վերցնելով ուրախ գարթ ճամբա ընկաւ դէպի տուն: Բայց ճանապարհին մի քանի ծանօթներ հանդիպելով՝ թրէնին հասնել չը կարողացաւ եւ ստիպված եղաւ ոտքով սուս գնալ...

Մկրտիչ աղան կամաց կամաց իջնում էր Պալի-Փաշայի դատիվայրը, մտքի մէջ ծրագրերն էր կազմելով իր Օննիկին աւելի մեծ հրճուանք պատճառելու համար:

Յանկարծ մի լրտես եւ մի ոստիկան երկու թիւերից ամուր բռնելով՝ գոչեցին:

— Կեանք, այդ ի՞նչ ես տանում...:

Մկրտիչ աղան նախ սարսափեց, վերջը մի քիչ ուշքի գալով պատասխանեց:

— Այնչ, միբոք եւ նւէրներ երկխայիս համար:

— Հա, միբոք. անցեալ Օգոստոսի 14ին էլ միբոք էին տանում հայերը:

շարժվիր, շուտ. գէպի Մեծ Ոստիկանատունը...

— Նայեցեք, պօրոններ, ճիշդ եմ ասում:

— Մենք չենք նայել, այնտեղ կը նայեն... Երթանք. շուտ մի խօսիր թէ չէ՛ ձեռ կուտես:

Մկրտիչ աղան շարժվեց. քալած միջոցին ուղեց կաշառել ոստիկաններին. բայց չեղաւ. ինչպէս երեւում է գուժարը քիչ էր, Մկրտիչ աղան շատ տալու կարողութիւնից զուրկ էր. եւ վերջապէս, պողարիւնութիւնը գանելով զգաց որ ինքը անմեղ է եւ առանց դրամի պէտք է ազատվի:

Մի քանի բոպէից ոստիկանութեան պետի սենեակում խուզարկվեց. նրա մօտ գտնվեց մի անոթիկ նամակ, որը հէնց այդ օրը Բուլղարիայից էր ստացել, իր մի գաղթական նոյնպէս անմեղ ազգականից. եւ այդ նամակը Մկրտիչ աղայի կազանքը հարամ արեց. ոստիկանները նրան առաջնորդեցին ոստիկանութեան բանտը...

Արդէն գիշեր է. նոր տարին մօտենում է, հինի վերջնապարտ կէս ժամ է մնացել: Մկրտիչ աղայի կիներ անբացատրելի սգի մէջ է, նա լալիս է. որովհետեւ ամուսինը դեռ չուկայից չէ վերադարձել, իսկ սիրուելի Օննիկը իր փոքրիկ թաթիկներով մէկ սրբում է մօր արտասուքները, մէկ էլ լալով հայրիկ, հայրիկ կանչում...

Իսկ այնտեղ, ոստիկանութեան բանտի մէջ՝ մի աղտոտ մեծ սենեակում բազմաթիւ հայ բանտարկեալների հետ չոր ասխտակի վրա նստել է Մկրտիչ աղան ու մտածում է Օննիկի եւ կնոջ մասին...

Հայ բանտարկեալները, մեծ մասամբ վանեցի, Մշեցի եւ Սերաստացիների մօտենում են նորեկին, հարց ու փոքձ անում, աշխատում միութարել, խրախուսել իրանց եւ իրանց ընտանիքի աւելի սարսափելի, աւելի անսասնելի վիճակի հետ ծանօթացնելով: Բայց ոչինչ չէ օգնում: Մկրտիչ աղան շարունակ կրկնում է...

Թողունք որ արիւնը Հայաստանի մէջ գետերով հոսէր :

— Ո՞վ պիտի հոսցնէր :
— Պրագլիլիական կառավարութիւնը :

— Պրագլիլիական խննդ էք ինչ էք :
— Հը՛, կերելի թէ դուք քաղաքականութեամբ չէք պաղտիր : եզրայր մինչեւ երբ պիտի խարուինք քաղաքականութեան խորը թափանցիլու է : խորը՛ :

— Բայց Պրագլիլիական :
— Կեցէք բացատրեմ եւ չի պիտի դարձանաք :

Հարաւային Ամերիկայի Պրագլիլիական հիմա սաստիկ խոտովութեան մասնուած է : այնտեղ կայ երկու գլխաւոր կուսակցութիւն, Սօցիալիստական եւ Ազատ-Կղերական : Սօցիալիստներն հիմակ իշխանութեան գլուխն են, բայց մեծ վախի մէջ : Ազատ-Կղերականները սկսեցին ամեն կողմէն կամաւորներ ժողովել :

— Բայց տա ի՞նչ կապ ունի Հայաստանի հետ :
— Համբերեցէք բարեկամ : Հիմա արդէն Պուլկարիոյ մէջ 1000 հայ զինավարժութիւն սովորին անշուշտ լրագրիները այդ բացառիկ նորութիւնը պիտի գրեն :

— Է՛հ, թող գրեն :
— Լա՛ւ : գրածունը դէս Պրագլիլիոյ Սօցիալիստական կուսակցութիւնը պիտի : . . .

— Այն ժամանակ մերոնք ալ կը զրմեն «Հանդէս»եան հայ Սօցիալիստ կուսակցութեան :

— Հայ սօցիալիստները միջամտութիւն յանձն չեն ստաներ, անոնք սկզբունքով անձրագիր գործունէութեան համակիր չըլլալով : յարաբերութիւնն իսկապէս են Պրագլիլիոյ սօցիալիստներուն հետ :

Ուրեմն Պրագլիլիոյ սօցիալիստական կուսակցութիւնը պիտի մասած որ հայերը տիրացու ազգ ըլլալով, բնականաբար աւելի սիրով պիտի կամաւոր գրուին Ազատ-Կղերականներուն, իսկ գիտէ՛ք որ հայերը ինչ անարկու կողմնակից են կղերականներուն օգնութեամբ :

— Ատոր կասկած չունիմ :
— Ուրեմն 100ին 100 հաւանական չէ՞ որ Պրագլիլիոյ սօցիալիստական կառավարութիւնը բնածանր գրկէ Սուլթանին եւ գրէ թէ՛ «Հէյ վեհափստ Համիտ, ի՛նչ կընես կոր, այս հայերը զինավարժութիւն կը սոր-

վին, իսկ դու կը քննաս, հայերը բոլորովին ազատ ձգեր ես, առանց անցարկ կը մտնեն կելլեն երկրէդ : քիւրաբուրն հողերը կանոն հայերուն կուտաս, անոնց համար վալիներդ կը կարես . . . Եւ այդպէսով Սուլթանը մեր դէմ կը բարկացնեն :

— Ձեմ կարծեք որ ձեր Սուլթանը այնքան զէջ մէկը ըլլայ :
Կլաստիստներն համար կըսեն թէ շատ «Իւրմար»ին մէկն էր : նոյնպէս պարագ տեղը ըսած չեն : «մարդ մարդու հրէշտակ, մարդ մարդու սատանայ» : հիմա մեր Սուլթանն ալ ելնէ Պրագլիլիոյ համոզուի թէ . . .

— Ձէ, չեմ յուսար որ համոզուի :
— Հապա համոզուեցաւ նէ՞, հապա սկսաւ արտասահմանի հայերը չընտունիլ Տաճկաստան, յիւրտեղուն հողերը ետ տալ, հայերը բոլորովին զինաթափ ընել, երկրի մէջ, հայոց ինքնավարութիւնը վերջացնել եւ կայսրութեան մացած մասերու մէջ զրկել հայերը բոլոր շնորհուած արտօնութիւններէ, գիտես ի՞նչ կըլլայ վերջը :

— Գէջ բան :
— Գէջ բանն ալ խնդիր է : չե՞ս գիտեր որ հայերն ալ արդէն անհամբեր ժողովուրդ, չը հասկնալով որ հարուածը Պրագլիլիայէն կուգայ, պիտի կատարին Սուլթանի դէմ, հարուստները իրենց փողերը չի պիտի խնայեն, տէրտէրները իրենց օրհնենքը, եւ ապա ապստամբութիւնը պիտի պայթի : կոխը որ սկսաւ, արիւնը գետի նման պիտի հոսի : Տե՛ս՞ք թէ ի՞նչպէս Պրագլիլիական կարող է Հայաստանի մէջ արիւն հոսցնել :

— Գոնէ հայերը յաղթէին, սարսափով չչնջացի ես :
— Յաղթեն յաղթունը գուր տեղը արիւն պիտի վազէ, եղբայր, ատոնք վտանգաւոր բաներ են : այս մեր անխելքները քաղաքականութեան խորը չեն թափանցիր կոր :

— Տղաքը խոր համոզուեցա՞ն :
— Ոչ միայն համոզուեցան, այլ Շուսլա ալ տեղերնէն չի շարժեցան : Ֆիլիպէ ալ գրեցինք որ յետ կենան : տակաւին լուր չառինք, հոն երթալով դու ալ համոզէ զանոնք : Ես արդէն հիացած էի եւ կը պատրաստուէի գրկել հանձարեղ խօսակիցս, երբ յոգեկտաքի երրորդ սուրբը զիս ստիպեց վազու նետուիլ :

— Մնաք բարով, մեծ երոխտագէտ-
գլխտ չէք նստում, դէ, պառկեցէք թէ չէ . . .

— Այո, արցունք չէ մնացել լալու, շարունակեց Մշեցին, առանց ուշադրութիւն դարձնելու պահապանի ձայնին . . . Բանի՛ կաղանդ քանի՛ Չտաիկ, քանի՛ Մուռնդ մեր կրկները առանց ամուսիններու, մեր զաւակները վար դոց, աչքերնին պաղած գոնէ թուղթի մը կտորի, նամակի մը սպանելով, անցուցեր են այդ տօն գիշերները : իսկ հիմակ ալ, արցունքի փոխարէն, արիւն կը տիրէ հոն, արիւն, գետերով, լիճերով . . .

Ու այս գիշեր ալ նոյնն է ամէն հայու տան մէջ, ամէն տեղ : թէ թուրքիոյ մէջ, թէ Բալքաններու ստորտները, թէ Արագածին տակ, եւ թէ Ազատ արտասահման . . .

Հայը դեռ կաղանդ, դեռ տօն չունի : առ այժմ ախարհիս վրա ան զրկւած է ատ իրաւունքէն : Սուլթանը հայը սուգի մէջ, միշտ սուգի մէջ տեսնել կուզէ . . .

— Բայց ի՞նչ կըսես, աղբար, ընդ-

ներ եւ մեծ քաղաքագետներ : պոռագի ես աշխուժով, եւ գնացքը շարժեցաւ : զրտեսութիւն :

ՄՈՒՈՐԱԿ

ՌՈՒՍԻԱ, ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

Ռուսիոյ վարժունքը դէպի իր գաշնակիցները Չինաստանի մէջ, դեռ առաջուրնէ կասկածներ յարուցած էր, մանաւանդ այն օրէն՝ երբ ռուսը սկսաւ իր զօրքերը Բէշիլիէն դարձնել :

Հիմակ ալ Ռուսիա իր երկու կարեւոր սպաները որոնք մարաշայտ վալտերգէի սպայակոյտին մէջ էին, ետ կանչած է : անոնց հրամայուած է Իէքիւնէն հեռանալ եւ մտնել ռուս զօրաբանակներու մէջ : Պարզ է որ Ռուսիա Չինաստանի մէջ կը գործէ նախօրօք գծուած քաղաքականութեամբ մը :

Այդ առթիւ ռուս «Պիրոսեփիա Վիտտոսթի» թերթը հետեւեալը կը գրէ .

Վալտերգէի Չինաստան հասնելէն ի՛վեր գործերու վիճակը անանկ կերպարանափոխուեցաւ : որ բոլորովին հաճելի չէ Ռուսիոյ : Ռուսիոյ շահերը միւս պետութիւններէն աւելի կը պահանջեն որ Չինաստանի մէջ խաղաղութիւնը վերահաստատուի : Դաշնակիցները ոչ թէ Չինաստանը խաղաղացուցին այլ ընդհակառակը աւելի յուզեցին : Փոխանակ Չինաստանի հետ խաղաղ միջոցներով գործը վերջացնելու, Եւրոպական հասարակական կարծիքէն հեռու, դիւանագէտները իրարու հետ կռուեցան : վերջապէս մեծ պետութիւններու միութեան փոխարէն՝ երեւան եկաւ առանձին Անգլո-Գերմանական քաղաքականութիւն մը, որ Չինաստանի վրայ անանկ պայմաններով կը բռնանայ, որոնք Չինաստանի ընդու-

նել տալու համար նոր արշաւանքներու պէտք է դիմել :


Այդպիսի պարագաներու մէջ Ռուսիոյ միայն կը մնայ առաջ գալիք հետեւանքներու պատասխանատուութիւնը իր վրայէն նետել եւ թողուլ որ պետութիւնները, որոնք այնքան յամառութեամբ կուզեն Չինաստանի անկախութեանը դէմ տոնձգութիւններ ընել, անոր կէս միլեարնոց բնակչութեան հետ գլուխ ելնեն . . .

Ռուսական զօրքերէն մաս մը միայն կը գտնուի Բէշիլիի նահանգին մէջ, և ատոնք ալ վալտերգէի արշաւանքներուն չեն մասնակցիր : Մեծ մասը իրենց տունները կը վերադառնան :

Ռուսիա վալտերգէի քովէն իր երկու սպաները ետ կանչելովը վերջնապէս իր յարաբերութիւնները կը խզէ հիւսիսային Չինաստանի մէջ գտնուած Եւրոպական զօրքերու հետ :

Ռուսիա պաշտպան կը հանդիսանայ Չինական հին կարգերու : Անշուշտ մարդասիրական և միջազգային արդարութիւնը և իրաւունքները չեն որ զինքը կը հեռացնեն իր գաշնակիցներէն : Ռուսիա կը ստակայ վերածնուած, Մանտարիներու ազդեցութենէն ազտուած Չինաստանէ մը, որ հիւսիսի գաղանդ սանձահարելու համար, ժամանակին իրենց գործիք պիտի դարձնեն Անգլիա կամ Գերմանիա . . .

Ռուսիա մեծ է, ու անոր զգացած ահ ու սարսափն ալ մեծ կըլլան . . .



Այդ ցաւը միայն դուն չես քաշեր, ամբողջ հայութիւնը կը քաշէ, մենք ամէնքս ալ կը քաշենք : մեղաւոր, անմեղ . . .

— Մի, մի խօսի՛ք ինծի հետ առանկ բաներու մասին : խնդրեմ : Ես դէ՛յ հայ չեմ, կղզամ ազգիս ցաւերը : սակայն իմ խելքս ատանկ բաներու չի հասնիր : Ես խելձ մարդ մըն եմ : իմ օրապահիկս հալալ քրտինքով աշխատող, Այս օրուան օրս անէս դուրս մնալը՝ ինծի համար մահու չափ ծանր է : Ձէք գիտեք թէ ի՞նչ կը դառնայ ներսիդիս . . .

— Գիտենք, գիտենք : դեռ աւելին գիտենք : Մեր ներսիդին դարեւրով ատանկ է : սերնդէ սերունդ սրտով ու հոգով կը տատապինք : այդ տատապանքներէն մենք այնքան լացած ենք, որ ալ արցունք չէ մնացեր . . . առարկեց Մշեցին :

Այդ խօսակցութեան միջոցին յանկարծ դուան տակից մի կոշտ ձայն լսվեց :

— Գեաղուրներ, ի՞նչ էք իրարու գլխի ժողովել : բանտի մէջ էլ հան-

գլխտ չէք նստում, դէ, պառկեցէք թէ չէ . . .

— Այո, արցունք չէ մնացել լալու, շարունակեց Մշեցին, առանց ուշադրութիւն դարձնելու պահապանի ձայնին . . . Բանի՛ կաղանդ քանի՛ Չտաիկ, քանի՛ Մուռնդ մեր կրկները առանց ամուսիններու, մեր զաւակները վար դոց, աչքերնին պաղած գոնէ թուղթի մը կտորի, նամակի մը սպանելով, անցուցեր են այդ տօն գիշերները : իսկ հիմակ ալ, արցունքի փոխարէն, արիւն կը տիրէ հոն, արիւն, գետերով, լիճերով . . .

Ու այս գիշեր ալ նոյնն է ամէն հայու տան մէջ, ամէն տեղ : թէ թուրքիոյ մէջ, թէ Բալքաններու ստորտները, թէ Արագածին տակ, եւ թէ Ազատ արտասահման . . .

Հայը դեռ կաղանդ, դեռ տօն չունի : առ այժմ ախարհիս վրա ան զրկւած է ատ իրաւունքէն : Սուլթանը հայը սուգի մէջ, միշտ սուգի մէջ տեսնել կուզէ . . .

— Բայց ի՞նչ կըսես, աղբար, ընդ-

հատեց Մկրտիչ աղան, կը հաւատամ որ այդպէս է, քիչ մըն ալ լսած էի, բայց չէի հասկնար, չէի ըմբռներ . . . Թո՛ղ մի խօսիր, իմ ցաւս ինծի հերքէ : վշտերու այդ ծովէն կը սարսափիմ, լսել չեմ ուզեր . . .

— Լսէ, լսէ, ընդհատեց Մշեցին, լսէ հասկցիր, ազգային անպիտան վիշտը, ցաւը, առաւապանքը ու քուկդ ալ խստնէ անոր հետ :

Հասկցիր որ հայ անհատը այսուհետեւ ոչ ուրախութիւն եւ ոչ վիշտ ունի անհատապէս . . . ոչ կաղանդ եւ ոչ մէկ տօն . . .

Արիւնտա վշտի մէջ կաղանդ չի կրնար ըլլալ . . . միլիոնաւորներու հեծկտանքի մէջ ուրախ քրքիչներ չեն լսուիր : կը խեղդուին, անոնք ալ հեծկտանք կը գառնան . . .

Պահապանը կրկին գոչեց եւ այս անգամ աւելի բարկացող ձայնով : Բանտարկեալ հայերը ցրվեցին իրենց սեղերը . . .


Մկրտիչ աղան կրկին մնաց նստած իր տեղում եւ սկսեց մտածել :
— Արդեօք ինչ կընէ խեղճ կիսս,

Օննիկս : կուլան, զիս կսպասեն, այս տարի կաղանդ չունինք . . .

Բայց ի՞նչ բսաւ մարդը . . . մինակ ես չեմ . . . ամէն հայերը կաղանդ չունին . . . բայց օր մը արգեօք պիտի ունենանք, մենք ալ պիտի ուրախանանք . . . մենք ալ պիտի խնդանք . . . Է՛հ, քանի որ ամբողջ հայութիւնը կաղանդ չունի, ամէն հայ օղաքները, կիները կուլան՝ թո՛ղ իմիններս ալ լան : ես ալ կուլամ . . .

Օր մըն ալ, Աստուած տայ մենք կը խնդանք . . . Ամէնքս միասին կը խնդանք, ինչպէս որ հիմա միասին կուլանք . . .

ՎԱՐԴՕ



ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Խրիմի Եմաթի քաղաքին մէջ քահանան մահամերձի մը հաղորդութիւն տալու միջոցին՝ իրմէ ստորագրութիւն պահանջած է որ հաշտ կը մեռնի «այսինչ» մարդուն հետ. հիւանդը յայտարարած է որ հաշտ է, բայց քահանայի պահանջին ապօրինութիւնը հաստատելով՝ մերժած է ստորագրութիւն տալ. Ասոր վրայ խտտապահանջ քահանան հաղորդութենէ զրկելու է վերջին ժամերու մէջ տանջուող հաւատացեալը:

Հետեւեալ օրը հիւանդը կը մեռնի և օտար քահանայով կը թաղուի:

Ապուշ տէրտէր:

— Տիրգրանակերտի վալին՝ առաջնորդական տեղապահ Նիզեկիէլ վարդապետի համար գոհունակութեան գիր գրեցի:

Այս ապացոյց է թէ՛ Նիզեկիէլի գէմ մեր Տիրգրանակերտի թըղթակցին գոհունակութիւնները իրաւացի են: Թուրք վալիի գոված վարդապետը հայ ժողովրդի համար չի կրնար օրոտացաւ ըլլալ:

Նոյն փառքին արժանացել է նաեւ Երզնկայի առաջնորդ Գանիէլ վարդապետը՝ իր գաւառապետի կողմէն:

— Էջմիածնի Գէորգեան ճեմարանի ուսուցիչները 50 ընդհանրապէս զրկելու են Պատրիարքարան՝ որբերուն համար:

Վերջապէս ճեմարանի ուսուցիչներն ալ զգածուեցան. գոնէ չնչին, ամչնալու չափ չնչին գումար մը հայ որբերուն զրկեցին...

— Խրիմի Ս. Խաչ վանքի վանահայր նշանակուելու է հռչակաւոր նահապետ վրդ. նահապետեան, բոլորովին անարժան յաջորդ Խորէն Ստեփանէի:

— Պատրիարքարանի նպաստից Յանձնաժողովը անցեալ երկուշաբթի օրուան նիստին մէջ որոշեց Շապին Գարահիսարի քանի մը թեմերուն մէջ նախակրթարաններ բանալ, ամսական երկու օսկի յատկացնելով:

— Հանգուցեալ Զանչեանցի յիշատակին համար՝ Էջմիածնի ճեմարանի մէջ երեկոյթ մը տըրուելու է՝ նախագահութեամբ Կաթողիկոսի և ուսուցիչներու ներկայութեանը:

— Ամերիկայի Պոստօն քաղաքի մէջ նոց թերթ մը սկսուելու է հրատարակուիլ «Կոչնակ» անունով:

Խմբագրութիւնը կը յայտարարէ որ շաբաթաթերթը անկախ է, ժողովրդի համար է, և նպատակ ունի Ամերիկայի հայ գաղթականութեան բարոյական և բնական պէտքերը լեցնել:

Միս Պէլքուէլ, հայոց բարեկամը, և ուրիշ հանրածանօթ Ամերիկացի և Անգլիացի զրոգ-

ներ պիտի աշխատակցին «Կոչնակ»ին:

Թերթը սկսուած է հայ ազգին բարեկամներու նուիրատուութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս.

Սուլթանը իմանալով որ՝ օտար երկիրներէ գաղթած մահմէտականներու մէկ մասը առանց բնակարանի կը մնան ու նեղութիւն կը կրեն, հրամայեց է իսկոյն ապահովել անոնց վիճակը:

— Պոսնայի մահմէտականները Իսկիւլ կը գաղթեն, և Սեւանիկի կողմերը կը տեղափոխուին:

— Պոմպայի մահմէտականները մէկ միլիոն ռուբլի հաւաքելով զրկել են Հիճազի երկաթուղիի շինութեան համար:

— Կըսուի թէ անգլիական մեծ նաւատորմից մը փետրուարի սկիզբները պիտի այցելէ Իզմիրի նաւահանգիստը:

Ինչպէս կերելի Անգլիան ալ Ամերիկայի հետեւելով, նաւատորմիցով կուզէ թուրքէն փրցնել, հայկական շարժերու միջոցին, իր հպատակներուն կրած վնասներու փոխարէնը:

— Սուլթանը մօտ օրերս իրատեղով մը պիտի ջնջէ ապրանքներու վրայ եղած ներքին տուրքերը, որոնք վաճառականութեան յառաջդիմութիւնը կը խանգարեն:

— Զմիւռնիոյ մէջ ժանտախտի դէպք մը պատահած է, Պոլսոյ միջազգային առողջապահական խորհուրդը այդ քաղաքէն եկողներուն համար 10 օր քարանդիւնա նշանակած է:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Ռուսական և Գերմանական իշխանութիւնները բանակցութեան մէջ մտեր են Թիէն-Չիւնէն Գանհայ Գուանի երկաթուղին, որ այժմ Ռուսիոյ ձեռքը կը գտնուի, Գերմանիոյ յանձնելու համար: Ռուսիա իրեզններուն կէս մասը իրեն պիտի պահէ, իրաւունք պիտի ունենայ նաեւ մեծ պարիսպներէն ասդին գտնուող գծին վրայ երթելու, որուն նորոգութեան համար ահագին ծախքեր ըրած էր, և վերջապէս այդ գծին վրայ գտնուող բոլոր աշխատանքները իրեն սեփականութիւնը պիտի ըլլան իրենց մէջը գտնուած առարկաներով միասին:

— Թերթերը կը ծանուցանեն թէ պետութեանց ներկայացուցած պայմանները առանց բացառութեան ընդունուել են չին լիազօրներու կողմէ: Սակայն գեսպանները անմիջապէս բա-

նակցութեանց չեն սկսիր լիազօրներուն հետ: Նախ իրենք առանձին պիտի հաւաքուին և ծանուցագիր մը պիտի խմբագրեն չինական իշխանութիւններէն պահանջելով որ իրենց խնդիրները գրաւորապէս ներկայացնեն:

— «Նիւ-Եօրք Հերալտ» կիմացնէ թէ պետութեանց առաջարկութիւններուն այս անակնկալ ընդունումը յանկարծակիի բերած է դեսպանները, որոնք եթէ անմիջապէս բանակցութեանց սկսէին, խիստ ծանր անհամաձայնութեանց պիտի հանգէին իրենց մէջ իսկ, մանաւանդ պատերազմական տուգանքի խնդրին մէջ:

Նոյն թերթը կը հաղորդէ թէ կայսրը կը պատրաստուի Իէքին գալ, բայց մայրաքաղաք պիտի մտնէ այն առեւ երբ դաշնակից զօրքերը հեռանան. իսկ անոնք հեռանալիք չունին:

— «Նոյն օրէ Կրէմլի» կիմացնէ որ երկու ուս զինուորներ մին մահուան և միւսը տաժանակիր աշխատութեան դատապարտուել են, երկու շինուհիներ առեւանգած ըլլալուն համար, որոնցմէ մին յետոյ սպաննած և միւսը ծանրապէս վիրաւորած են:

— Պարոն տը Գէթլէրի սպաննիչին մահուան դատաւճիռը գործադրուել է Իէքինի մէջ, դեկտ. 31ին, գերմանական զօրքերը կը հսկէին ամբողջ որ անհամար բազմութիւն մը կը ներկայացնէր: Մահապարտը կէս ժամ ծուռի եկած՝ ստիպուեցաւ սպասել դերմանացի սպաններուն որոնք փափաք յայտնած էին ներկայ գտնուիլ գլխատման հանդէսին: Այս կէս ժամուան մէջ, դահճապետը և իր օգնականները սուրբերին մերկացուցած՝ դատապարտուին բոլորտիքը շարուած էին, որ զուարթ կերեւար և միշտ կը ծիծաղէր ըսելով թէ իր անունը պատուաւոր կը մնայ և ինք միշտ պարկեշտ մարդ մը եղած է:

Գլխատմանը ամենէն վայրագ կերպով գործադրուել է Գահիճը չուանը ոճրագործին վիզէն անցնելով, կարելի եղածին չափ սաստիկ սկսեր է սեղմել. այն պահուն, որիչ դահիճ մը ծունդերով դատապարտուին օսկրներուն յենած՝ անոր ձեռքերը միշտ ետեւ կը տանէր և բուռն ցնցուկով մը երեսը փոշիներուն մէջ կը թաղէր: Այդ ատեն երրորդ դահիճ մը իր սուրով երկու ուժգին հարուածներ իջեցուց գլուխը իրանէն բաժնելու համար: Գլուխը փոշոյը կախուած վանդակի մը մէջ զըրուեցաւ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Քարի իշխանութիւնները ժողովրդին կոչ մը ըրած են, զանոնք հրաւիրելով աշակցել զօրքերուն՝ պօստներու արշաւանքը արգիլելու համար: Նախարար-

ները արտաքոյ կարգի ժողով մը գումարած են ձեռք առնուելիք միջոցներուն մասին խորհրդակցելու համար և որոշել են այժմէն զինուորագրութեան սկսիլ, 550 մարդիկ զինուորագրուելու են առաջին օրէն իսկ, և կը յուսան թէ երկրորդ օրը արագէն կրկնապատիկ զինուորագրուողներ պիտի ըլլան:

Միւս կողմէն հեռագիրները կիմացնեն թէ պօստները բազմաթիւ փոքր խմբեր կազմելով կարչաւեն գէպի Քարամէն ուղղութեամբ, և արագէն երկրին մինչեւ հարաւային մասերը հասած են: Մասնաւորապէս կը շանան չի յարձակիլ այն քաղաքներուն վրայ ուր պահակազօրքեր կը գտնուին, բայց թշնամիներուն լուրջ վնասներ կը պատճառեն: 10,000 հոգիէ աւելի կը հաշուուին Քարարշաուղ պօստները:

— Լօրտ Գիչնէր հեռագրով մը պաշտօնապէս կը հաստատէ Հէլվէտիայի յանկարծական գրաւումը: Պօէրներն առաւօտեան ժամը երկու քիւն քաղաքը գրաւել են: Անգլիացիք թէեւ ուժբազորներ են քաղաքը, բայց պօստները դարձեալ յաջողներ են զայն պրաւել, ահագին կորուստ պատճառելով թշնամիներուն, 11 անգլիացի սպանուելու և 26 հոգի վիրաւորուելու է, որոնց 4ը սպայ, 250 հոգի ալ գերի բռնուել են:

— Լօրտ Ռոպէրթս Լոնտրա հասել է, ուր փառաւոր ընդունուելով իրեն: Փողոցները տուններէն կախուած դրօշակներու կամ թափանցիկ կտաններու վրայ անգլիացի զօրավարին ուղղեալ անհամար ձօներ ու մաղթանքներ կը կարդացուէին, քարափը և կայսրանը շքեղապէս զարդարուած էին: Պաշտօնական բազմութեամբ գրաւուած էր ամբողջ քարափը ուրկէ դուրս ձգուած էր ամբողջ կալիէսի իշխանը Չերմագին ընդունուելով իր ըրաւ զօրավարին, որ մեկնեցաւ թագուհոյն մասնաւոր պատուիրակին ընկերակցութեամբ: Ծանապարհին ամէն կողմէ կեցցէներ կը լսուէին և ծաղկափունջերու տարափ մը կը տեղար ամէն կողմէ իր կառքին վրայ:

Ն Ա Ս Ս Ա Ս Ո Ւ Փ

Ամերիկայի և Եգիպտոսի չը վճարող բաժանորդներուն. — Կը խնդրենք շտապել բաժնեգիրները մինչեւ Փետրուար մէկ անպատճառ հասցնել մեզ: Մինչեւ այդ ժամանակ չը վճարողներուն այլեւս «Շարժում» չի պիտի զըրկուի: Միեւնոյն ժամանակ չը վճարողներուն անունները պիտի հրատարակուի «Շարժում»ի մէջ: